ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2804-Ա « 24 » հուլիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԼԱՄԲՐՈՆԻ ՓՈՂՈՑ Հ.31 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐԻԿ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի Հ.4006-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գոհարիկ Վարդգեսի Ասատրյանի (ծնված 07.01.1956թ.) դիմումը: Երևանի Կենտրոն, Լամբրոնի փողոց հ.31 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 517.19քմ, որից 224.03քմ մակերեսով հողամասը Գոհարիկ Վարդգեսի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.06122017-01-0238 վկայականը):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 05.04.2023թ. տրված հ.ԱՏ-05042023-01-1204 տեղեկանքը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.07.2024թ. հ.20-Ել-76351 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Կենտրոն, Լամբրոնի փողոց հ.31 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. ՈՒԺը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2010 թվականի օգոստոսի 30-ի «Երևանի Լամբրոնի փողոցի հ.31 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Կառլեն Սուրենի Եղիազարյանի իրավունքները վերականգնելու, 97.91քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4006-Ա որոշումը:

2. Վերականգնել Երևանի Կենտրոն, Լամբրոնի փողոց հ.31 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գոհարիկ Վարդգեսի Ասատրյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 224.03քմ մակերեսով հողամասին կից 293.16քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 293.16քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

4. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան քաղաք, Կենտրոն, Լամբրոնի փողոց հ.31 հասցեում գտնվող 517.19քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ